ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2022-2023 ուստարի, I կիսամյակ)

29.04.2023թ.

2022-2023 ուստարվա առաջին կիսամյակում տարբեր կրթական ծրագրերով մասնաճյուղի 4 ֆակուլտետների 31 մասնագիտական դասընթացների շրջանակներում իրականացվել են հետազոտական աշխատանքներ: Նման կազմակերպմամբ և տրամաբանությամբ աշխատանքներ մասնաճյուղում իրականացվում են արդեն երրորդ ուսումնական տարում, և այդ աշխատանքների կազմակերպումը և իրականացումը յուրաքանչյուր մեկնարկից առաջ վերանայվում և բարելավվում է:

Առաջնորդվելով մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան գործողության կատարման անհրաժեշտությամբ (1.2.4. Պարբերաբար իրականացնել ուսանողների կրթական կարիքների գնահատում) մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո՝ մարտին, հարցման միջոցով ուսումնասիրել է 1-ին կիսամյակի հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը:

Հարցման նպատակն էր բացահայտել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, գրանցել նախորդ ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների հետ համեմատության դինամիկան, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող – բուհ համագործակցությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,
2. կատարած աշխատանքից,
3. հետազոտական աշխատանքի գնահատումից:

Հարցման օբյեկտիվության և ուսանողների անկաշկանդ մասնակցության նկատառումներով հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով: Հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանք իրականացրած 275 ուսանողներից **196-ը** (**71%**), որը մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է (նաև նախորդ ուստարվա **30%** մասնակցության համեմատ) և վկայում է հետազոտական աշխատանքների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության, դրանց արդյունավետ կազմակերպման նկատմամբ ուսանողների սրտացավ և ուշադիր վերաբերմունքի մասին: Նշենք, որ այդ մասին ուսանողները բաց հարցերում առանձնահատուկ արտահայտել են իրենց գոհունակությունը: Մասնավորապես, նրանք նշել են, որ կցանկանային հետագայում հետազոտական աշխատանքներն ավելի շատ լինեին, քանի որ նոր գիտելիքներ ենք ձեռք բերում և ավելի հմտանում հետազոտական աշխատանք գրելու գործում և այլ աշխատանքներ կատարելու մեջ, որ այն արդյունավետ է և ուսանողին տալիս է

ինքնուրույն մտածելու և վերլուծելու հմտություններ, ընդլայնում է մտահորիզոնը, և գոհ են իրականացրած հետազոտական աշխատանքներից և ստացած գնահատականներից:

	ԲԳՖ		ԿԱՖ		ՀԳՖ		ՏԳՖ		ԸՆԴ	
	2021-22	2022-23	2021-22	2022-23	2021-22	2022-23	2021-22	2022-23	2021-22	2022-23
Հետազոտական աշխատանք կատարած ուսանողների թիվը	38	33	36	38	70	130	44	74	**188**	**275**
Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	14	14	5	32	24	117	13	33	56	196
Մասնակցությունը՝	37%	42%	14%	84%	34%	90%	30%	45%	30%	71%

Հարցման արդյունքները հավաքագրվել և վերլուծվել են մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից:

Այժմ ուշադրության արժանի առանձին գործընթացների վերաբերյալ ներկայացնենք հարցման ամփոփ արդյունքները և դրանց վերլուծությունը:

1. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի բովանդակությունից և ռեսուրսներից

Հարցման մասնակից ուսանողների 90%-ը կատարել և ներկայացրել է հետազոտական աշխատանքը, ավելի քան 80%-ը մասնակցել է թեմաների առաջադրմանը:

Աշխատանքի կատարման և իրականացման գլխավոր շարժառիթներից է թեմայի արդիականությունը և ուսանողների կողմից թեմայի ընկալելիությունը: Ուսանողների **38%**-ի համար հետազոտական աշխատանքի թեման նախասիրությունների շրջանակներում է եղել, **45%**-ի համար՝ եղել է ուղղակի հետաքրքիր թեմա, իսկ 17%-ի համար՝ պարզապես հանձնարարություն:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հետազոտական աշխատանքները ղեկավարող մեր դասախոսական կազմին հաջողվել է թեմաները ընտրել ուսանողների մոտ **83%-ի** հետաքրքրությունների շրջանակներում: Ինչը վատ ցուցանիշ չէ:



Եվ հենց այդ ցուցանիշի ցանկալի հետևանք կարելի է համարել աշխատանքի կատարման բարդության գնահատականը ուսանողների կողմից: Ինչպես երևում է ներքոնշյալ դիագրամից,

նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ այս տարի մեր ուսանողների մոտ աշխատանքի կատարումն առավել դյուրին է ստացվել: Եվ եթե հաշվի առնենք այն փաստը, որ համեմատության մեջ ներկայացված արդյունքները վերաբերվում են երկու ուսումնական տարիների նույն կիսամյակներին, այսինք ուսանողները երկու դեպքում էլ ունեն հետազոտական աշխատանք կատարելու նույն փորձառությունը, հետազոտական աշխատանքները կատարվել են նույն դասընթացներից (ենթադրվում է), կարելի է փաստել, որ արդյունքների դրական դինամիկան պայմանավորված է պատասխանատու ստորաբաժանումների (ԿԲԴՎ բաժնի, ամբիոնների) կողմից ուսանողների հետ տարված մեծածավալ խորհրդատվական աշխատանքներով և հետազոտական աշխատանքներ ղեկավարող դասախոսների կողմից թեմաների առաջադրմանն առավել հետևողական և հիմնավորված մոտեցմամբ:



Հետազոտական աշխատանքների իրականացումն ուսանողների համար եղել է ձեռքբերումային, ինչի մասին փաստել են ուսանողները՝ նշելով, որ ստացել են նոր գիտելիքներ, ձեռք բերել վերլուծելու, դատողություններ և եզրակացություններ անելու կարողություններ, ինքնուրույն աշխատելու ունակություններ և այդ ցուցանիշները նախորդ ուստարվա



արդյունքներին չեն զիջում և բարելավվել են (նշենք, որ նախորդ ուստարում հարցմանը շատ քիչ ուսանողներ են մասնակցել): Այստեղ պետք է առանձնացնել ձեռք բերած ինքնուրույն աշխատելու ունակությունները, ինչի զարգացումը մասնաճյուղի նոր ռազմավարական

առաջնահերթություններից է: Արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների մեծ մասը խնդիր ունի հավաքագրած տվյալները ինքնուրույն վերլուծելու, դատողություններ ու եզրակացություններ կատարելու հետ:

Այնուամենայնիվ այս ուսումնական տարում ունեցած նշված ցուցանիշները վատ ցուցանիշներ չեն, իսկ ուսանողների նշված կարողությունները և մասնագիտական հմտությունները զարգացնելու համար ամբիոնները և բոլոր շահագրգիռ կառույցները պետք է հետևողական աշխատանք տանեն ուսանողների հետ, հաճախակի կազմակերպեն հանդիպում-քննարկումներ ուսանողների հետազոտական աշխատանք կատարելու կարողությունները զարգացնելու, նրանց աջակցելու համար:

Ուսանողների 81%-ը ծանոթ է եղել հետազոտական աշխատանք կատարելու մեթոդաբանությանը, 19%-ը մասամբ է ծանոթ եղել, և ուրախությամբ կարող ենք նշել, որ չենք ունեցել հարցման մասնակից ոչ մի ուսանող, ով տեղեկացված չի եղել աշխատանքի կատարման մեթոդաբանությանը: Այս ցուցանիշը նույնպես փաստում է դասախոսական կազմի, ամբիոնների և համապատասխան ստորաբաժանումների պատասխանատու և հետևողական մոտեցման մասին:

Ամփոփելով հարցման առաջին մասը կարող ենք փաստել, որ աշխատանքի բովանդակությունը լավ է կազմակերպված: Դասախոսական կազմին հաջողվել է ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքների մեջ, ապահովել նրանց շահագրգռվածությունն այդ աշխատանքները կատարելու գործում, ապահովել թեմաների հասանելությունը և մատչելիությունը և այլն:

2. Ուսանողի բավարարվածությունն իր կատարած աշխատանքից

Բաժնի կողմից իրականացված բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքները բազմիցս վկայել են, որ մեր ուսանողներն ինքնագնահատման հարցում ունեն բավականին խիստ և օբյեկտիվ մոտեցում: Այս հարցման արդյունքները ուրախացնող են նրանով, որ ուսանողները գոհ են եղել իրենց կատարած աշխատանքից և գնահատել են բարձր: Այսինքն այս արդյունքները կարելի է համարել առաջընթացային:





Արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների մոտ բավականին լավ է ստացվել ինքնուրույն հավաքել անհրաժեշտ տեղեկատվությունը (մասնակիցների **72%**-ի մոտ), օգտվել անհրաժեշտ գրականությունից (**77%**-ի մոտ), ներկայացնել ձեռք բերված արդյունքները (**86%**-ի մոտ), անգամ ձևակերպել եզրակացությունները (**74%**-ի մոտ) և ներկայացնել կատարած աշխատանքը (**89%**-ի մոտ)։ Այստեղ պետք է առանձնացնել մշտապես մտահոգիչ խնդիրը՝ կապված աշխատանքի պլանավորման, նպատակի ու խնդիրների ձևակերպման, թեմայի արդիականության և նշանակության գնահատման խնդիրների հետ։ Այսինքն, ուսանողների հիմնական դժվարությունները կապված են աշխատանքի նախնական կազմակերպման և հետագա գործունեությունն ու տվյալ աշխատանքից ակնկալիքները հստակեցնելու հետ։ Այդ ցուցանիշները ցածր չեն, համապատասխանաբար՝ **58%** (նախկին ուսումնարում՝ 57%), **64%** (51%), **69%** (55%), սակայն առաջադրում են հարցեր և ակնկալում դրանց լուծմանը միտված գործընթացներ և միջոցառումներ։

Ամփոփելով հարցման այս բաժնի արդյունքները կարող ենք փաստել, որ ուսանողներն ընկալել են հետազոտական աշխատանքում իրենց հիմնական գործողությունները և ցուցաբերել են պատասխանատու մոտեցում։ Ամբիոններին և հետազոտական աշխատանք ղեկավարող դասախոսներին առաջարկում ենք աշխատել ուսանողների հետ, առանձնահատուկ ուշադրություն դարձնել աշխատանքի պլանավորմանը, նպատակի և խնդիրների ձևակերպմանը, աջակցել և ուղղորդել նրանց ինքնուրույն մտածողության ձևավորմանը։

3. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի գնահատումից

Ուրախությամբ կարող ենք նշել, որ հարցմանը մասնակցած ուսանողների **97%-ը** տեղեկացված է եղել աշխատանքի գնահատման չափանիշներից, որից 84%-ին ներկայացրել են դասախոսները։

Կրթության թափանցիկության, մատչելիության և մոտիվացիայի բարձրացման կարևոր գործոններից է գնահատման գործընթացը։ Դասախոսի առջև դրված է բարդ խնդիր, քանի որ գնահատումը լինելով ինքնին սուբյեկտիվ գործընթաց, պետք է հնարավորինս օբյեկտիվորեն ներկայացվի ուսանողին։

Այն փաստը, որ ուսանողների գերակշիռ մասը կողմ է գնահատման ընտրված չափանիշներին, վկայում է գնահատման գործընթացում դասախոսական կազմի լուրջ և մանրակրկիտ մոտեցման մասին: Շատ կարևոր է ուսանողին ճիշտ մատուցել գնահատման ամբողջ գործընթացը: Այս դիագրամում ներկայացված են նաև նախորդ ուստարվա արդյունքները, ըստ այդ արդյունքների հարցմանը մասնակցած ուսանողների **54%**-ը գտնում է, որ գնահատման չափանիշները ճիշտ են ընտրված, 43%-ի համար դրանք մասամբ են ճիշտ ընտրված, ինչի մասին իրենք նաև արտահայտվել են բաց հարցերում, օրինակ առաջարկելով հետազոտական աշխատանքներում գնահատել ուսանողի ինքնուրույնությունն ու վերլուծելու կարողությունները, ոչ թե միայն տեսասահիկը, գնահատել ավելի խիստ՝ ըստ հաստատված չափանիշների և այլն:



Այն հանգամանքը, որ դասախոսական կազմի կողմից գնահատման գործընթացը իրականացվում է պատշաճ կերպով և ուսանողների համար հիմնավորված է, վկայում է ներքոնշյալ դիագրամը: Ուսանողները բավարարված են հետազոտական աշխատանքի համար ստացած իրենց գնահատականներից:



Ուսանողների **89%**-ի համար իրենց ստացած գնահատականը համապատասխանում է կատարած աշխատանքին, այս արդյունքը բավականին գոհացնող է:

Հատկանշական է, որ եղել են շատ քիչ թվով ուսանողներ (3-ը), որոնց համար իրենց ստացած գնահատականը գերազանցել է սպասելիքներին:

Ամփոփելով հարցման 3-րդ բաժնի արդյունքները կարող ենք փաստել, որ հետազոտական աշխատանքների գնահատման գործընթացը բարելավվել է, սակայն այն պետք է մշտապես պահել ուշադրության կենտրոնում, ապահովել գնահատման թափանցիկություն և օբյեկտիվություն:

Ամփոփում

Հարցման իրականացման նպատակը եղել է նաև վեր հանել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողներին հանդիպող խոչընդոտները, հավաքագրել հետզոտական աշխատանքի իրականացման և գնահատման հետ կապված նրանց կարծիքները և նշված գործընթացի բարելավմանն ուղղված նրանց առաջարկները:

Նշենք, որ հարցմանը մասնակցած ուսանողների մոտավորապես 30%-ն է (**58 ուսանող**) արձագանքել և կիսվել իրենց խնդիրներով և մտահոգություններով, և կատարել նաև մի շարք առաջարկներ:

Նրանք նշել են, թե ինչ խնդիրների են հանդիպել հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում: Նրանց նշած խնդիրները խմբավորել ենք ըստ մի քանի հիմնական ուղղությունների, դրանք են.

1. **Գրականության և նյութերի հավաքագրման հետ կապված խնդիրներ**, որոնց մասին նշել է այս հարցին պատասխանած ուսանողների **52%**-ը: Գրականության խնդիրը մշտապես ուղեկցող խնդիր է: Կարող ենք փաստել, որ մասնաճյուղը վերջին տարիներին ձեռք է բերել բավականին մասնագիտական գրականություն, այնուամենայնիվ դրա հետ կապված խնդիրը դեռ լուծված չէ: Դրանցից են.

- գրականության և նյութերի բացակայություն կամ սղություն,
- հայերեն լեզվով նյութերի բացակայություն,
- ծավալուն նյութերի հավաքագրման դժվարություն:

2. **Տեխնիկական խնդիրներ, տեղեկատվական տեխնոլոգիաներից և ծրագրերից օգտվելու խնդիրներ**, որոնց մասին նշել է հարցին պատասխանած ուսանողների **16%**-ը: Պարզվում է ուսանողները դժվարանում են օգտվել տարբեր տեղեկատվական համակարգերից, նաև խնդիր ունեն հետազոտական աշխատանքի էլեկտրոնային տարբերակի մշակման համար համապատասխան ծրագրերից օգտվելու հետ:

3. **Աշխատանքի իրականացման ընթացքի հետ կապված խնդիրներ**, 58 ուսանողներից 10-ը նշել է, որ խնդիր է ունեցել աշխատանքի իրականացման հետ կապված (ԻԿՄ-1, ԱԼԳ-2, ՏՄՄ-4, Հոգեբանություն-3): Օրինակ, այդ խնդիրներից նշել են. ինչպես սկսել և ավարտել, որպեսզի նյութը հասկանալի ներկայացվի, թեմայի սակավություն, ժամանակի սխալ կառավարում, նյութերի ճիշտ բաշխման դժվարություն և այլն:

4. Ուսանողների մի մասն իր դժվարությունները կապել է առաջին անգամ հետազոտական աշխատանք կատարելու հետ, դրանք «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողներն են (4 ուսանող), իսկ «Հոգեբանություն» կրթական ծրագրի 5 ուսանողներից 3-ը գրել են, որ դժվարացել են հարցախույզեր (թեստեր) կազմելուց, թեստերի արդիականացված տարբերակները գտնելուց, դժվարացել են ընտրանքի հետ կապված հարցերում:

Ուսանողներից մեկը բարձրաձայնել է ևս մեկ խնդրի մասին, որը կապված է հետազոտական աշխատանքը ղեկավարող դասախոսի բեռնվածության հետ: Դասախոսը միաժամանակ աշխատում է մեծ թվով ուսանողների հետ և հաճախ ժամամանակը չի ներում բոլորի հետ անհատապես աշխատելու, նաև կատարված աշխատանքը ստուգելու, ինչի արդյունքում աշխատանքը ստացվում է ոչ լիարժեք:

Հետազոտական աշխատանքի կազմակերպման և գնահատման բարելավման համար ուսանողները կատարել են մի շարք առաջարկներ, որոնք նույնպես խմբավորվել են ըստ ուղղությունների: Դրանցից են.

1. Հետազոտական աշխատանքի գնահատման հետ կապված առաջարկներ.

- գնահատել ավելի խիստ, ըստ հաստատված չափանիշների (Պատմ),
- գնահատել ուսանողի ինքնուրույն մտածողությունն ու վերլուծելու կարողությունները (ԱԼԳ),
- գնահատել ամբողջ աշխատանքը, ոչ թե միայն տեսասահիկը (ՏՄՄ),
- վերանայել գնահատման միավորը (5 միավորը քիչ է) (Զբոս, ՏՄՄ/3), կամ ուղղակի դարձնել ստուգարք (Ֆինանսներ),
- գնահատման չափանիշները հաճախակի չփոխել (Հոգեբ.),
- պաշտպանությունն իրականացնել հանձնաժողովով (ԱԼԳ):

2. Թեմաների հետ կապված առաջարկներ.

- թեմաներն ընտրեն ուսանողները (ԱԼԳ, Հոգեբ.),
- թեմաները նախապես քննարկել ուսանողների հետ (Ֆինանսներ),
- ընտրել թեմաներ, որոնց համար անհրաժեշտ նյութերը լինեն հասանելի (Ֆինանսներ, ՏՄՄ),
- թեմաները լինեն հետաքրքիր, արդիական, մոտիվացնող (ԱԼԳ, ՀԼԳ),
- թարմացնել թեմաները (Դիզայն),
- առաջադրել թեմաներ, որոնք քիչ են ուսումնասիրվել կամ ընդհանրապես չեն ուսումնասիրվել (ՀԼԳ):

3. Հետազոտական աշխատանքի կազմակերպման հետ կապված առաջարկներ.

- օգնել օգտվելու ճիշտ աղբյուրներից (ԱԼԳ),
- նշանակել մենթորներ, օրինակ բարձր կուրսեցիներից, ովքեր կուղղորդեն աշխատանքի կատարման ընթացքում (Ֆինանսներ),
- աշխատանքները լինեն անհատական (Պատմ),
- հետազոտական աշխատանքի իրականացման համար կցել մի քանի դասախոս (Ֆինանսներ)
- ստեղծել պայմաններ Համալսարան-դպրոց համագործակցության համար, նպաստելով հետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացմանը (ՏՄՄ),
- ավելի մանրամասն ներկայացնել հետազոտական աշխատանքի իրականացման կարգը՝ շեշտը դնելով գրելու ձևի վրա (ՏՄՄ),
- աշխատանքի ընթացքում հետևել ոչ միայն ուսանողին այլ նաև դասախոսին, պարզել, թե որքանով է նա պատշաճ կատարում իր աշխատանքը (ՖԼԳ),

- կիսամյակում իրականացնել մեկ հետազոտական աշխատք (ՀԼԳ), կամ ավելացնել հետազոտական աշխատանքների քանակը (Պատմ/2),
- նախքան աշխատանքի ներկայացնելը մի քանի անգամ կազմակերպել քննարկումներ (ՖԼԳ),
- համալրել գրադարանի գրականությունը (Պատմ)։

Ամփոփելով հարցման արդյունքներն ամբիոնների վարիչներին առաջարկում ենք մշտապես հետևողական լինել հետազոտական աշխատանքների կազմակերպական, նաև դրանց իրականացման բովանդակային կողմի նկատմամբ, ուսումնասիրել ուսանողների բարձրաձայնած խնդիրները և առաջարկները, գտնել խնդիրների լուծման ընդունելի տարբերակներ, պարբերաբար աջակցել ուսանողներին՝ հաղթահարելու խոչընդոտները և այլն։

Մասնավորապես, կրթական ծրագրերի ղեկավարներին, հետազոտական աշխատանք ղեկավարող դասախոսներին առաջարկում ենք.

1. նախքան հետազոտական աշխատանքը սկսելը ուսանողներին ներկայացնել բոլոր թեմաները, մեկնաբանել դրանց արդիականությունը և աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ գրականության ցանկն ու հավաքագրման ենթակա նյութերի աղբյուրները,
2. կազմակերպել խորհրդատվական դասընթացներ հետազոտական և ինքնուրույն աշխատանքներ իրականցելու մեթոդաբանության, տեխնիկական ապահովման և այլ պահանջների վերաբերյալ,
3. հանձնարարել այնպիսի աշխատանքներ, որոնք լինեն հետաքրքիր, արդիական, ուսանողից կպահանջեն դրսևորել ստեղծագործական մտածողություն, իրականացնել վերլուծություններ, կատարել եզրահանգումներ,
4. հետազոտական աշխատանքի գնահատումն իրականացնել ըստ չափանիշների և հիմնավորված։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին